



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն**

« 13 » « *օգոստոս* » 2019 թ. № *269-ՂԻ*

**«ԷԼ - ԿԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԳԵՂԱՐՈՏ»
ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՅԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ N 000029
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով «Էլ-Կաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2017 թվականի մարտի 2-ին փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով տրամադրված N 000029 ջրօգտագործման թույլտվության պայմանները՝ պարզվել է, որ «Էլ-Կաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը փոքր հիդրոէլեկտրակայանը շահագործում է ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտմամբ, այն է՝ փոքր հիդրոէլեկտրակայանի ջրահեռացումից հետո տեղի է ունենում ջրային ռեսուրսի որակական փոփոխություն, այն ինչ ջրօգտագործման թույլտվությամբ պայմանների 9-րդ կետով ամրագրված է, որ փոքր հիդրոէլեկտրակայանի ջրահեռացումից ջրի որակական փոփոխություն տեղի չի ունենում:

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի 2019 թվականի հուլիսի 17-ի N 5/18.1/51824-19 գրությամբ ընկերությունը ծանուցվել է ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի համաձայն 15 աշխատանքային օրվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանի գործունեությունը ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխանեցնելու վերաբերյալ, ինչը ընկերության կողմից չի կատարվել:

Շրջակա միջավայրի նախարարությունն իր 2019 թվականի օգոստոսի 2-ի N5/18.1/52019 գրությամբ «Էլ Կաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը լսելու նպատակով հրավիրել է քննարկման, ինչը կայացել է:

Ղեկավարվելով ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի 5)-րդ կետով ու նախավերջին պարբերությամբ և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կասեցնել՝ «Էլ-Կաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2017 թվականի մարտի 2-ին «Գեղարոտ» փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով տրամադրված N000029 ջրօգտագործման թույլտվությունը:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում:

« 13 » օգոստոս 2019թ.
ք.Երևան



Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ